ԱՊՐԻԼ 27/10 ՄԱՅԻՍ 1904

Ա. ՏԱՐԻ. — ԹԻՒ 45

ԵՐԱՊԱՆԱՍԻՐԹԻՆ

ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

Բաժանորդագին՝ 10 Ֆր. տարեկան

Հասցէ՝
Réd. du jour. „VERADZNOUTIOUN“.-Roustchouk
Ред. на в. „ВЕРАДЗНУТЮНЪ“. — Руссе

ՄԱՅԻՍ ՄԷԿԻ ԱՌԹԻՒ

Մայիս մէջի քանուորական համաշխարհային ցոյցը՝ համաշխարհային կազմակերպած պրոլէտարիատի պատմական ձգտումների տօնն է, սոցիալիստական ազատարար գաղափարի հասարակական նիւթագործութիւնն է։ Ունենալով անմիջական նպատակ ութժամեայ աշխատանք՝ «վերակենդանացնելու համար քանուորների ֆիզիքական ոյժը և նրանց ապահով միջոց տալու, մտաւոր զարգացման հետ միասին, ունենալ սոցիալական անարգել յարաբերութիւններ և քաղաքական գործունէութիւնա, այդ ցոյցն ըստ ինքեան հրապարակային ագիտացիայի մի հզօր միջոց է. յոգուտ սոցիալական խնդրի լուծման։ Ամբողջ քաղաքակիրթ աշխարհում, գրում էինք մենք գեռ տասն տարի առաջ, այսօր արբպեսում է այդ խնդիրը, ամենամեծը, ամենաէականը բոլոր հասարակական խնդիրներից — սոցիալական կամ բանուորական խնդիրը։ Այդ խնդիրն է այսօր կազմում այն կենտրոնակէտը, որի շուրջն են կատարում բոլոր քաղաքակիրթ տէրութիւնների քաղաքականութիւնը, քաղաքական կուսակցութիւնների ընթացքը և ազգերի քաղաքական–տընտեսական դէպքերն ու շրջանները։ Որովհետև սոցիալական խնդիրը հանրամարդկային մէկ այնպիսի մեծ խնդիր է, որի նմանները պատմութեան մէջ երևան են եկել միայն մի քանի անգամ, և ամեն անգամ՝ յեղաշրջելով ազգերի հանրակեցութեան բոլոր կերպերն ընդհանուր առմամբ։ Աւելի ևս։ Պատմութեան մէջ մինչև այժմ երևան եկած այդպիսի խնդիրներից ամենամեծը սոցիալական խնդիրն է։ Այդ խնդիրն իր մէջ ամփոփում է միաժամանակ քաղաքակիրթ ազգերի ներկայ վերին աստիճանի բարդ հանրակենցաղի բոլոր այլ երևոյթների որոշիչ իմաստը և բոլոր այլ հարցերի լուծման ձևն ու եղանակը։ Սոցիալական խնդիրը — ամեն բան է հասարակական տեսակէտից։ Տնտեսական ու քաղաքական կեանք, նիստ ու կաց, աշխատանքի և կապիտալի յարաբերութիւն, դրականութիւն, մամուլ, գեղարուեստ, կանանց հարց, ամուսնական խնդիր, պատերազմ, գիտութիւն, ուսում, դպրոց — մի խօսքով, ամեն հասարակական, ընկերական յարաբերութիւնների յետագայ զարգացման և առաջադիմութեան ձգտումներն ու պահանջներն իրանց ամբողջականութեամբ։ Նա այդ բոլոր երևոյթների արդիւնքն է ամենայայն ծաւալով, ամենահիմնական եղանակով և ամենաէական իմաստով, որպէս՝ չմի հասարակական խնդիր երբէք չէ էղել մարդկութեան պատմութեան երկար ընթացքում մինչև այսօր։ Եւ սոցիալական խնդիրն ահա՝ այդ համաշխարհային, այդ հանրակենսական բովանդակութիւնն ու իմաստն ամփոփելով իր մէջ, քաղաքակիրթ ազգերի ներկայ հանրակացութեան պայմանների և առաջնապէս ու գլխաւորապէս տիրող արդիւնաբերական, կապիտալական, կերպերի յայտնի աստիճան զարգացման ու հասունութեան շնորհով եկել կանգնել է մարդկութեան առաջ ըստ-պառնական, ամեն բան կլանող, ահաւոր կերպարանքով, պահանջել իր շուտափոյթ լուծումը։ Եւ այդ լուծումն այլ ևս հանդիսանում է քաղաքակիրթ ազգութիւնների յետագայ առաջադիմութեան և ամեն ու լիակոչմանի ազատագրութեան միակ պայման։ Եւ այդ լուծումը չէ կարող այս կամ այն կամքի համեմատ լինել, չէ կարող լինել այլ կերպ, եթէ ոչ միայն՝ այնպէս, ինչպէս պահանջում են արդիւնաբերական ներկայ կերպերի զարգացման բնական ոգին ու պատմական ողդութիւնը։

Սոցիալական խնդիրն ուրիշ խօսքով անուանենք բանուորական խնդիր։ Ի՞նչ է նշանակում այդ։ Ա՛յն, որ բանուոր ընդհանրութեան դասակարգային պատմական ձգտումներն ու պահանջներն են, որ առաջացրել են սոցիալական խնդիրը. և կամ — ինչ միևնոյնն է — սոցիալական խնդիրը յայտնում է ամփոփումն ու արտայայտութիւնը բանուոր ընդհանրութեան դասակարգային ձգտումների ու պահանջների։ Ինչո՞ւ սոցիալական խնդիրն իր ներկայ իմաստով երևան չեկաւ երկու, երեք և աւելի դար առաջ։ Որովհետև նա ստեղծուցաւ արդիւնաբերութեան անցեալ դարու և ներկայի, կապիտալական կոչած, կերպերից, կերպե՛ր, որոնց պայմանների շնորհով ծնունդ առաւ մարդկութեան մէջ ներկայի բանուոր դասակարգն՝ իբրև պրոլէտարիատ, որ նշանակում է ամեն տեսակներից զատ, իր ֆիզիքական կա՛մ մտաւոր ոյժերը ծախելու միջոցով միայն՝ ապրող դասակարգ։ Մագած լինելով արդիւնաբերութեան ներկայ, կապիտալական, պայմաններից, սոցիալական խնդիրն իր հիմքով տնտեսական խնդիր է և, հետևաբար, առաջնապէս ուղղակի արդիւնք է բանուոր դասակարգի, պրոլէտարիատի ներկայումս ունեցած տնտեսական պահանջների ու ձգտումների։ Սոցիալական խնդիրը լինելով պրոլէտարիատի պատմական ձգտումների արդիւնք, այդ ձգտումների, ուրեմն, ամբողջական իրագործումով էլ միայն կարող է նա ստանալ իր բաւարար, ամփոփ ու ճշմարիտ լուծումը։ Իսկ այդ լուծումն այսօր, ինչպէս վերն ասացինք, ամբողջ քաղաքակիրթ աշխարհում դարձել է ստիպողական, անխուսափելի պահանջ, հանդիսանալով իբրև միակ պայման հնարաւոր, որպէս նաև ազատ ու անարգել դարձնելու մարդկութեան յետագայ ընդհանուր զարգացումն ու առաջադիմութիւնը, անվախճան, աւելի և աւելի լայնածաւալ ալիքներով տարածուող մինչև մարդկային կեանքի ծովի բոլոր ափերը, որով և նրան ազատագրող ամեն կերպ, բարոյապէս, մտաւորապէս, տնտեսապէս, սոցիալական ամեն արտայայտութիւններում, ամենալայն և ամենախոր իմաստով։

Ահա՛ պրոլէտարիատի այդ պատմական վեհը, բնական և ազատարար սոցիալական ու տնտեսական ձգտումների ու պահանջների տեսական արտայայտութիւնն ու ամփոփումն է, որ կոչւում է գիտական սոցիալիզմ, այլ խօսքով՝ սոցիալ–դեմոկրատիզմ։ Իբրև այդպիսի՝ սոցիալիզմը յայտնւում է այն միակ ուղին, որ տանում է գէպի կատարեալ լուծում բանուորական, սոցիալական խնդիրը, և այդպիսով, ուրեմն, սոցիալիզմն է, որ պայմանաւորում է հանրամարդկային յետագայ ու շարունակական առաջադիմութիւնը, կուլտուրական զարգացումը։ Բայց այդ ամբողջական լուծումն ըստ ինքեան առաջադրում է մի պայման, մի–միակ պայման, իբրև բնական կերպով բղխող ներկայ, կապիտալական, հանրակենցաղի աղբիւրից. — այդ պայմանն է՝ ներկայ հասարակական կազմակերպութեան հիմնական յեղաշրջում։ Եւ ահա ինչո՛ւ գիտական սոցիալիզմը, այսինքն սոցիալ–դեմոկրատիզմն իր էութեամբ հանդիսանում է յեղափոխական, կրող իր գաղափարի մէջ սոցիալական յեղափոխութեան պատմական իմաստն ու պրակտիկական գործադրութիւնը։

Դա՛ է ահա սոցիալական խնդրի, ուրեմն և սոցիալիզմի, համաշխարհային ու հանրամարդկային մեծ, խորին, նշանակութիւնը։ Դա՛ է նաև համաշխարհայինպրոլէտարիատի, առանց խտրութեան երկրի և ազգութեան, պատմական մեծ կոչումը, իրագործող քաղաքակիրթ մարդկութեան արդար, ազատ ու բարձր իդէալը, իբրև հիմք ու պայման նրա նոր հանրակենցաղի, նրա հասարակական ու մասնաւոր ամեն յարաբերութիւնների։ Եւ որովհետև կապիտալիզմի և աշխատանքի յարաբերութիւնների հիմնական դրութիւնն ամե՞ն երկիրներում և ամե՞ն ազգերի մէջ մի և նոյնն է, այսինքն շահագործութիւն, եքսպլուատացիա աշխատանքի կապիտալիզմի ձեռքով, կամ — ինչ մի և նոյնն է — էքսպլուատացիա բանուոր դա-

սակարգի, պրոլէտարիատի կապիտալիստ դասակարգի ձեռքով, — այդ պատճառով էլ ամենի երկիրների և ամեն ազգերի պրոլէտարների շահերը մի և նոյնն են՝ արտայայտած սոցիալիզմով, որպէս և նրանց ամենքն էլ ունեն մի և նոյն գլխաւոր թշնամին՝ կապիտալիստ դասակարգը ամեն երկիրներում և ամեն ազգերի մէջ։ Հէնց այդ դրութիւնից է, որ առաջ է եկել և ծիածանով կապել հանրամարդկային հանրակենցաղի երկինքը պրոլէտարիատ դասակարգի միջազգայնութիւնը, ինտերնացիոնալիզմը, որ կործանում է ամեն սահմաններ երկիրների ու ժողովրդների մէջ, որ մէկ ընդհանուր ուղղութեան ու ճանապարհի վրայ է դնում ամեն երկիրների և ամեն ժողովրդների առաջադիմութեան պայմանն ու հիմքը, որ առաջ է բերում ամեն երկիրների և ամեն ազգերի մէջ եղբայրութեան գաղափարը՝ ընդհանուր, լիակատարեան ու հաւասարաբաժին բարեկեցութեան կենցաղով։

Ահա ա՛յդ է արտայայտում Մայիս Մէկի Համաշխարհային Բանւորական Ցոյցը՝ անբաժան կերպով կապուած այս վսեմ, խորիմաստ ու նշանակալի, որպէս և մարտական և ազատարար կոչով. — «Պրոլետարներ՝ ամեն երկիրների, միացէ՛ք!» Եւ մասնաւորելով մեր խօսքը, աւելացնում ենք մեր կողմից. — Պրոլետարներ՝ ամեն ազգութիւնների Ռուսաստանում, միացէք!

ՄԱՅԻՍԻ ՄԷԿԸ

ԼՕՆԴՕՆՈՒՄ

Օ՛րը, Մայիս մէկը, որ սոցիալիստական յեղափոխութեան զարգացման ներկայ ֆազիսում ամբողջ աշխարհի սեփականաւոր դասակարգի զաւակներին ի մի է ժողովում ճնշուած կրծքերից նրանց բողոքը դուրս ժայթքեցնելու բուրժուազական ամենաանխիղճ կարգերի դէմ, եւ որ—հաւանականաբար— մի այլ, յեղափոխութեան յետագայ ֆազիսումն էլ իւր նուիրագործութեամբ կարող կը լինի ջղոտ բազուկների միլիոնաւոր լեգէօնը յեղափոխական կուռ լայնարձակ ասպարէզը դուրս բերել՝ վերջնականապէս խորտակելու ներկայ քաղաքական եւ տնտեսական իրաւունքների անհաւասարութեան պաշտպան մի բուռը բուրժուազական բանակը, օ՛րը, որ այնքան սրբացած է պրոլէտարիատի աչքում, որքան ոչ մի օր, այո՛ օրը այս տարի էլ տօնուեցաւ Լօնդօնում եւ ունեցաւ մի քանի աչքի ընկնող առաւելութիւններ։

Այս անգամ դէմօնստրացիային—ցոյցին—մասնակցեցին անգլիացի ֆաբրանսիացի, գերմանացի, լեհ, հրէա, ռուս եւ հայ սոցիալիստներ՝ թէ՛ իբրեւ անհատներ եւ թէ՛ իբրեւ ներկայացուցիչներ իրանց սոցիալիստական յեղափոխական կազմակերպութեան։ Բացի սրանից՝ ցոյցի թէ՛ նախընթաց եւ թէ՛ իսկական օրը զանազան լեզուներով հրատարակուած զանազ անտեսակ թերթեր, բրոշիւրներ եւ մանրանդ թռուցիկներ ու պօստ-կարտներ Մարկսի պատկերով աւելի շատ տարածուեցան եւ գնուեցան ներկաների կողմից։

Շարաթ երեկոյեան տեղի ունեցաւ զուտ դեմոկրատական կօնցերտ եւ պար Նոր Ալէքսանդրա հօլի մէջ, ուր ի միջի այլոց երկու փոքրիկ պիէսներ ներկայացրին ռուսաց լեզուով եւ մաքարօսական ու կովկասեան պարեր պարեցին։ Ուշագրաւ էր զանազան ազգերի ներկայացուցիչների գուրգուրալից վերաբերմունքը դէպի միմեանց եւ կարգադրիչների եռանդուն աշխատանքը։

Կիրակի օրը ժամի երեք եւ կէսին հազարաւոր բանւոր բազմութիւնը դրօշակներով եւ երաժշտութեամբ նշանակուած տեղից շարժուեց դէպի Հայդ Պարք. ուր ժամի հինգին սկսեցին իրարից յետոյ կրակոտ կերպով խօսել յիշած ազգերի լեզուներով։ Բոլոր խօսողներն իրանց—իբրեւ սոցիալիստների—ընդհանուր պահանջների վրայ չեշտելուց յետոյ՝ իւրաքանչիւրը իր երկրի ըէժիմի մասին ամփոփ տեղեկութիւններ տուեց։ Բացի սրանից՝ ամենախիստ կերպով դատապարտեցին ռուսական կառավարութեան դեսպոտիզմն առանձնապէս եւ Ռուս-Ճապոնական պատերազմն ընդհանրապէս։ Վ. Սիկորսկին (լեհ, ռուսական նախկին պաշտօնեայ) ամենասարսափելի գոյներով նկարագրեց Լեհաստանի ներկայ դրութիւնը, իսկ Հընչակեան սոց. կուսակցութեան կենտրոնի անդամ պ. Հրահատ-Կամսարը բաւական հակիրճ կերպով ներկայացրեց հայի անտանելի վիճակը Թիւրքիայում եւ Ռուսաստանում, մասնաւորապէս եւ՛ Կովկասում, ապա չեշտեց այն բանի վրայ, որ երկու երկիրներումն էլ կռիւը բռնակալների եւ հայութեան մէջ իսկապէս տնտեսական հողի վրայ է տեղի ունենում թէեւ փոքրիկ տարբերութիւններով։ Իւր առածները նա— իբրեւ ներկայացուցիչ իր կուսակցութեան — վերջացրեց այսպէս.—

„Եւ մենք, իբրեւ սոցիալիստ յեղափոխականներ, մեկնում ենք ձեզ, ընկերնե՛ր, մեր ձեռքը յեղափոխական կռիւի մէջ՝ ընդդէմ ամեն տեսակ բռնութեան...“։

Փառաւոր ցոյցից յետոյ, նոյն երեկոյեան տեղի ունեցաւ յիշուած հօլի մէջ բանկէտ։

2 Մայիսի 1904. X.
Լօնդօն.

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

VI

ԳԻՒՂԵՐՈՒՄ

Ա.

(շար. նախորդ թիւէն եւ վերջ)

«Ջայրացած» անտառապահը գործ է դնում իւր ասածը։ Եւ ահա հարիւրներով ծանուցագրեր են գալիս գիւղերը և բնակիչներին հրաւիրում «դատարան»։ Դրանց հետեւում է «խիստ հրամանա. — շուտով հաւաքել տուգանքները։ Պրիստաւից սկսած մինչև գիւղի յետին գլիրը տենդոտ գործում են։ Նախ դրանք պէտք է մի քիչ օգտուեն։ Կաշառքներ ստանալով՝ մի քանի շաբաթով կամ ամսով յետաձգում են տուգանքի վճարումը։ Վերջ իվերջոյ սկսում են խաղացնել մտրակները։ Բռնի կերպով ծախում են սրա եզը, միւսի կովը, ոչխարը, նրա ձին, մի ուրիշին էլ ստիպում են վաշխառուի դուռը թակել։ Տուգանքները հաւաքում են։ Գիւղացին անիծում է իւր «քոռ բաղրա» և մտքի մէջ հայհոյում անտառապահին, կամ իրեն կշտամբում, որ նրա պահանջը չը կատարեց։ Անտառապահը հրճւում է։ Նա ցոյց տուեց իւր ոյժի զօրութիւնը և գիւղացիների անկարողութիւնը իւր առաջ։ Միւս անգամ գիւղացին չէ կարող մերժել նրա պահանջը, որը այս անգամ աւելանում է։ Եւ արդարև անտառապահը իվերջոյ յաղթանակում է և ստեղծում իւր և իւր «մեծաւորներիս» համար հարստութեան աղբիւր։ Այնուհետև կաշառք պահանջելը և ստանալը դառնում է մի սովորական բան, օրէնք։ Տուգանքներն էլ գլխաւորապէս աղքատ, աշխատաւոր գիւղացիներից է՝ դուրս գալիս, որովհետև անտառապահը «քաշւում» է գիւղի դառաջաւորա մարդկանցից, հարուստներից և նրանց հետ մրցել անկարող է. նրանք բարեկամութիւն ունեն իւր մեծերի հետ և երբեմն ընծաներ են ուղարկում թէ դրամով և թէ այլ առարկաներով՝ զորդ, մեղր, դաորը և. լն։ — «Օբէշչիկը» (անտառապահը) մեր տունը քանդեց, մենք գերի, եսիր ենք նրա ձեռքին, նրա պատճառով պարտքերի մէջ թաղուած ենք, պարտատէրն էլ ունեցած-չունեցածներս է ծախում, ի՞նչ անենք...» — ասում են գիւղացիները տրտում տխուր։

Այդպէս է անտառապահը։ Նա հայի, շորի, ձիու համար գարիի և այլ ծախսերի փող չէ տալիս. ձրիապէս ստանում է իւր բոլոր գիւղերից, որովհետև նրանց «աչքը վախցրել» է. նա իւր ամբողջ ընտանիքով ծանրանում է այդ գիւղերի աղքատ ազգաբնակութեան վրայ։ Նոյնը անում են և նրա օգնականները։

Սակայն այստեղ էլ, անցանքը գլխաւորապէս միապետական խայտառակ կառավարութեանն է։ Նա իւր բոլոր պաշտօնեաներին դնում է անապահով դրութեան, տնտեսական այնպիսի պայմանների մէջ, ուր նրանք անկարող են բարեխղճօրէն իրենց պարտականութիւնները կատարելով հանդերձ՝ ապրել ինչպէս հարկն է և դուրս չը գալ հարստահարութեան ասպարէզը՝ իրենց գոյութիւնը պահելու համար։ Ի՞նչ կարող է անել ողորմելի անտառապահը՝ եթէ ոչ հարստահարել, երբ իրեն տալիս են ամսական 12—15 ռուբլի և պահանջում, որ նա ունենայ ձի, երբ պահանջում է ընտանիք պահել, իրեն պահել, ձիուն կերակրել։ Ի՞նչ կարող է անել նրա օգնականը, երբ ամսական 7—10 ռուբլի է ստանում. — դարձեալ հարստահարել՝ ապրելու համար։ Նրանք նոյնպէս մտածում են իրենց սև օրւայ մասին, քանի որ չինովնիկները կարող են հեռացնել պաշտօնից, քանի որ նրանք խէթ աչքով են նայում նրանց, որոնք քիչ տուրք են հասցնում իրենց։ Կառավարութիւնը շատ լաւ գիտէ, որ իւր տուած չնչին վարձով անկարելի է ապրել։ Նա այն էլ շատ լաւ գիտէ, որ գիւղական ազգաբնակութիւնը կը լրացնէ պակասը։ Ինքը էլ հնարաւորութիւն է ունենում աւելի մեծ չափով շահագործել անտառները, որը այսօր իր ձեռքն է գցել և զրկել ժողովրդին նրանցից հաւասարապէս օգտուելու հնարաւորութիւնից։

Թող պետութիւնը մարդավարի վարձատրէ իւր պաշտօնեաներին, և նրանք կը կրճատեն իրենց հարստահարութիւնը. այսպէս վարձի բարձրանալով կը մեղմանայ պաշտօնեաների գիշակերութիւնը և իվերջոյ կը դադարէ գոյութիւն ունենալուց։ Թող պետութիւնը մի փոքր ծախս անէ գիւղերում յատուկ տներ շինելով զանազան «ղուլլուղի» մարդկանց համար, և գիւղացիները կազատուեն իրենց անկոչ հիւրերից։ Բայց դեսպօտը այդ փոքրիկ բաներն անգամ չէ անում. դա իրեն հակասութեան մէջ կը ձգէր։ Չէ՞ որ նա այժմ մի միայն հընչում է, նեղում ազգաբնակութեանը և նրա բարօրութեան մասին մտածելու պարտաւոր չէ ըզգում իրեն։ Բարեխիղճ մարդը ստանձնելով անտառապահի պաշտօնը՝ կամ պէտք է չըշարստահարելով գիւղացիներին քաղցած մնայ ու պարտքերի տակ, կամ պէտք է ծծէ աշխատաւոր մարդկանց արիւնը՝ իրեն գոյութիւնը պահելու համար և կամ «նամուսով» պէտք է թողնի պաշտօնն ու հեռանայ։

Անտառապահներին կաշառակեր դարձնողը կաշառակեր ցարիզմն է գլխաւորապէս, և այդ պատճառով էլ գիւղացիներին թշուառացնողը՝ դարձեալ նոյն ցարիզմը։

Բագու Ահրիման

ՆԱՄԱԿ ԿՈՎԿԱՍԻՑ

16 Ապրիլ 1904

Կովկասը ներկայումս գըտնւում է շատ աննախանձելի վիճակում։ Մարդիկ դէպի իրար շատ կասկածանքով են վերաբերւում. լրտեսները ամեն տեղ վրիտում են. ամենաթեթև կասկածը ահագին խուզարկութիւնների ու ձերբակալութեանց պատճառ է լինում. ձերբակալութիւններին թիւ չկայ. քաղաքների բանտերը լիքն են քաղաքական յանցաւորներով. հին ձերբակալածներին այժմ ուղարկում են գաւառական բանտերը, իսկ նորերին պահում են քաղաքներում՝ քննութիւն կատարելու համար։

Կառավարութիւնը գլուխը միանգամայն կորցրել է Ծայրագոյն Արեւելքում իւր կրած պար-

տութեանը համար։ Մամուլը ոչ մի բաւարար տեղեկութիւն չի տալիս պատերազմից, եղածներն էլ բոլորը սուտ են և մասամբ կրկնութիւններ. իսկ թխովի հեռագրական լուրերի մասին խօսելն անգամ աւելորդ է։ Կառավարութիւն և ռուս պահպանողական մամուլը այժմ յոյսները դնում են ո՛չ թէ իրենց զէնքի, այլ զանազան սուրբերի և հայր Սարաֆիմների վերայ, բայց սուրբերն էլ, կարծէք, խլացել են և չեն լսում ցարի յուսահատական աղաղակներին, որովհետև ցարը հայոց եկեղեցիներից բերած աւարից իրենց բաժին չհանեց. տեսնենք, ասում են, որ ցարին և սուրբերին հաշտեցնելու համար միջնորդութիւն է յանձն առել հայր Յովհաննէս Կրոնշտատսկին, միայն այն պայմանով որ իրեն էլ կարմիր խաչի կոմիտէի անդամ նշանակեն։

Ներքին օրից օր աճող յեղափոխութիւնն ու դրամական ճգնաժամը պակաս մտատանջութիւն չէ պատճառում կառավարութեանը։ Դրամականը լրացնելու համար կառավարութիւնը մի նոր աղբիւր է գտել։ Այն անձինք, որոնք ձերբակալում են որպէս քաղաքական յանցաւորներ, եթէ դրամ ունենան պետական գանձարաններում, այդ գումարը կըրաւում է յարքունիս. ուրեմն բանից դուրս է գալիս, որ Ռուսաստանում գործող յեղափոխականը իրաւունք չունի անձնական դրամ ունենալու։ Երկրորդ աղբիւրն էլ այն է, որ եթէ մէկ անհատ կամ վաճառականական հիմնարկութիւն գործից մի շատ թեթև սխալ (օրինակ, եթէ խընդրագիրը մաքուր չէ կամ տառասխալներ կան և այլն), իսկոյն տուգանքի է ենթարկւում՝ նայած հարստութեանը։ Իսկ յեղափոխութիւնը ջոգելու համար՝ ծեծ, բանտ, աքսոր, կաշառք այդ բոլորը հնացած միջոցներ են, մանաւանդ որ այժմ Ռուսաստանում բանտարկեալները աւելի ազատութիւն են վայելում՝ քան դրսում քաղաքացիք։ Բայց չէ՞ որ ցարը ամենաողորմածաբար ամեն բանի հսկում է և տէրութեան շահերն աչքի առաջ ունի, ինչո՞ւ ուրեմն բանտարկեալներին ձրիապէս կերակրել. և ահա մէկ մանիֆեստ ուղղւած քաղաքական յանցաւորներին ու աքսորեալներին, ցարը ամենաողորմածաբար կը ների ձեր յանցանքները, եթէ զղջաք ու մոնէք կամաւորների շարքերը՝ գնալու Հեռաւոր Արևելք և ջարգելու այն կռապաշտ ստատանաներին, որոնք համարձակւում են յաղթութիւններ տանել... Իսկ սրան աքսորականները պատասխանում են. «մենք մեզ մեղաւոր չենք զգում, որ ցարը մեզ ների և ցանկութիւն էլ չունենք պատերազմի գնալու, այլ մեզ հարկաւոր է միայն հանգստանալ, մանաւանդ որ մենք պատերազմի գէմ ենք»։ Մի քանիսն էլ աքսորականներից գրում են ուղղակի ներքին գործոց նախարարին իրենց կարծիքն ու հայեցակէտը՝ ընդհանրապէս պատերազմի և մասնաւորապէս Ռուս-Ճապոնական պատերազմի մասին։

Մի երկու օրինակ էլ թելադրած նիւթական նուիրատուութիւնից։ X քաղաքում մի հարուստ ինչ որ դատաստանական գործի համար նահանգապետին է դիմում, որը ուրախութեամբ ընդունում է նրա առաջարկը, միայն այն պայմանով, որ հարուստը՝ որպէս քաղաքում յայտնի մարդ և քաղաքային խորհրդի անդամ՝ հարց բարձրացնի ժողովում և 10—15 հազար ռուբլի նուիրի քաղաքի կողմից օգուտ պատերազմի։ Մեր հարուստ ազան, առանց տատանելու, 5 օրից յետոյ իր խոստումը կատարում է՝ առաջարկելով քաղաքային խորհրդին 15 հազար ռուբլի յատկացնել պատերազմական ծախքերի համար, որը միաձայն ընդունում է առանց ձեն ծըպտուն հանելու, և ո՞վ կարող էր ձայն հանել, չէ՞ որ իսկոյն՝ որպէս հակակառավարական մարդ՝ կը գնար բանտ։ Նոյնը տեղի ունենում է Բագու քաղաքում X... ովի և X...իչի կողմից, որը ունենում է ամենամեծ յաջողութիւն, այն է 150 հազար ռուբլի։

Ինչպէս լսում է, Բագուում ռումբ արձակող երեք ռուսներին դեռ ևս պահում են բանտում։ Այժմ լուր է պտտւում որ այդ գործը Գալիցինի ագենտներն են արել նորա թելադրութեամբ։ Նոյնպէս լուր է շրջում, որ Բագուում մի քանի հայ ինժիներներ, փաստաբաններ (նոյն այն մարդիկը, որոնք միտք էին յղացել մաղթանք կատարել ցարի յաղթանակի համար) կամենում են հանգանակութեան ձեռնարկել և մտադիր են մինչև 200 հազար ռուբլի մի գումար հաւաքել և յանձնել կառավարութեանը պատերազմական պէտքերի համար։ Եթէ այդ ճիշտ է, ուղղակի ծաղր ու հեգնութիւն է՝ ուղղւած այն տասնեակ զոհերի, որոնք մի քանի ամիս առաջ ընկան ցարի գաղան կողակների գնդակներից և որոնց արիւնը դեռ չէ չորացել եկեղեցու սալայատակին...։

Գալով կովկասեան զիւղացու վիճակին՝ դա ևս օրից օր անտանելի է դառնում։ Գիւղացիներին այլևս չեն թողնում արքունական հողերի վերայ վարուցանքն անել, մանաւանդ՝ հայ, վրացի և թուրք գիւղացիներին։ Նոցա գանգատները թողնւում են անուշադիր. օրինակ X գաւառի գաւառապետը գողանալ է տալիս հայ գիւղական քահանայի լաւ ձին. քահանան դիմում է գաւառապետին, որ գողերը գտնեն. և դիտէ՞ք ինչ է պատասխանում նա. «ինչո՞ւ ինձ մոտ ես գալիս, գնա քո Հայրիկից գանգատիր և թող գողերին նա գտնի, չէ՞ որ նա ձեր թագաւորն է»։

Գանձակի նահանգի գաւառապետներից մին կանչելով իւր մօտ այնտեղի մահմեդականներից մի քանիսին՝ թելադրում է գաղտնի զէնք առնել և ինքը խոստանում է աչակցել այդ բանում, պայմանով որ, նոքա սկսեն հայերին նեղել։ Դրա հետևանքը այն է լինում որ թուրքերը հանդում սպանում են խ..գիւղի միջակ հարստութեան տէր մի վաճառականի. և երբ սպանւածի եղբայրը դիմում է գաւառապետին, նա պատասխանում է. «ի՞նչ անեմ, դուք աւաղակներին, ես կը պատժեմ»։

Առ հասարակ վերջերս կառավարութիւնը ամեն միջոց գործ է դնում, որ թուրք և հայ ազգաբնակութեանց միջև խռովութիւններ ձգի, որպէսզի մի գազանային կոտորած էլ այստեղ առաջացնի՝ նման 95—96ի թրքահայ կոտորածին։

Բացի այդ բոլորից՝ կառավարութիւնը Կովկասի հարկը երեք տարի ժամանակով աւելացրել է, չնայած որ առանց այն էլ աղգաբնակութիւնը սաստիկ ծանրաբեռնւած էր հարկերով։

Հայաջինջ քաղաքականութիւնը դեռ ևս շարունակւում է առաջ տարւել։ «Нов. Время» թերթի խմբագիրները սաստիկ վրդովւած են և աղմուկ են բարձրացնում թէ Ռուսաստանը վըտանգի մէջ է, որովհետև Պետրովսկ քաղաքում (Կասպեան ծովի արևմտեան ափի վերայ 25 տարի առաջ հիմնւած), որը ռուսներն են հիմնել և զուտ ռուսական մի սուրբ քաղաք պէտք է լիներ, այժմ համարձակւում են բնակել հայերն ու հրէաներ. բացի այդ, այնտեղ կան մի քանի յայտնի վաճառականներ այդ երկու աղգութիւններից, և այդ ապերախտ հեթանոսներին յաջողւեց մինչև անգամ քաղաքագլուխ ընտրել մի հայի, որը առաջ գործակատար էր մէկ ռուսի մոտ։ Եթէ այդ բոլորի առաջը շուտով չառնւէ, ասում են նրանք, Ռուսաստանի սահմանները շատ կը փոքրանան և Պորտ Արտիւրից ճաքոնացիք, իսկ Պետրովսկից հայն ու հրէան շուտով կը տիրանան Ռուսաստանին։

Կառավարութիւնը այնքան լարւած է հայերի դէմ, որ մինչև անգամ ռուս միամիտ գիւղացիների մէջ տարածել են որ Մակարով ծովակալը հայ է և նա դիտմամբ մեր նաւերը խորտակել տւեց. իսկ Մայրագոյն Աբեւելքի փոխարքայ Ալէքսիէվի մայրը զրիմեցի հայուհի է, նորա մէջ էլ հայի արիւն կայ, որովհետև երբ պատերազմական գործողութիւնները սկսեցին, նա էլ Պորտ Արտիւրը թողց ու փախաւ Մուգտին։ Այսպիսի նախապաշարումներով են կերակրում միամիտ ժողովրդին։

Կառավարութիւնը այժմ բաղկացած է այնպիսի տգէտ և արիւնարբու անձնաւորութիւններից, որոնք երբէք ընդունակ չեն մի կառք էլ վարելու, ուր մնաց Ռուսաստանի նման մի ընդարձակ երկիր։ Այդ բանը ի նկատի ունենալով՝ Պետերբուրգի ինտելիգենտ բարձր շրջաններում լուրջ կերպով մտածւում է Սահմանադրական կառավարութեան մասին...։

Մանիկեան

ԻՄ ՆԱՄԱԿՆԵՐԸ Ա.-ԻՆ

ՆԱՄԱԿ VII.

—

Սիրելի ընկեր!

Դուցէ կը յիշես, որ անցեալ նամակներիս մէկում ակնարկեցի կովկասահայ ցոյցերի ժամանակ, ռուսաց մի քանի այսպէս ասած «Ռուսական ժողովարանիս*) շկոլայի արժանաւոր ձագուկներ՝ հայերիս 1862 թ. լեհական կոտորածով սպառնացողների խըզճուկ կրկռոցները։ Ինչ ասել կուզի, որ այդ դիպլոմատ հրապարակախօսները ամենայն ճարպիկութեամբ խոհեմութիւն չհամարեցին հայերիս աչքը անցեալ տարւայ Քիշինեվի հրէական կոտորածով վախեցնել, այլ՝ 1862 թ. լեհական կոտորածով։ Եւ դա պատահական մի բան չէր. այդ բառերի մէջ անարգ դիւանագիտութեան մի ամբողջ թոյն էր թագնւած։ Ռուս միահեծան բռնակալը և իւր լիրբ ստրուկները նկատելով և՛ արտաքին և՛ ներքին թշնամիների անլուսապ պայրոյլն ու արդար բողոքը՝ խոհեմութիւն համարեցին կոտորածների բուն պատճառը հէնց հրէաների շլնքին էլ փաթաթել, և մինչև անգամ, ինչպէս ասում են, «մի քանի շահի էլ հրէաներ պարտ մնացին»։ Խօմ, մի քանի անհիմն կամ բոլորովին չեղած «ֆակտերս» գտնելը դժուար չէ։ Ահա թէ ինչո՛ւ համար, սիրելիս, հայերին աւելի հին՝ լեհական կոտորածով սպառնացին և ոչ հրէական թարմ կոտորածով։ Հա՛, մի ուրիշ պատճառ էլ այն կարող է լինել, որ լեհական կոտորածը տեղի ունեցաւ ցարի բաշի-բոզուկների և նոցա ամբողջ զինուորական պատրաստութեամբ, մինչդեռ հրէաների Քիշինեվի կոտորածը տեղի ունեցաւ կառավարութեան թելադրութեամբ՝ ֆանատիկ ռուսների ձեռքով։ Ի հարկէ Կովկասում վերջին միջոցով հայերիս կոտորածով սպառ-

*) Դա մի հաստատութիւն է, որ գտնվում է Պետերբուրգում. կոչվում է Ռուսական Ժողովարան, որովհետև բացի ուղղափառ ռուսներից, ուրիշ ազգեր իրաւունք չունին այդ օտարաստեաց ժողովարանի դասախօսութիւններին և ժողովներին ներկայ գտնուելու։

նալ չէին կարող. ուստի, մնում էր ցարի բաշի-բոզուկների նիւթած լեհական կոտորածով մեզ սպառնալ։ Մի կողմ թողնելով եւրոպական դիպլոմատիայի, մամուլի և հրապարակախօսների տուած արդար դայրոյթը և յարձակումները ռուսաց անողոք գաղանութիւնների դէմ, ռուսաց հասկացող և ճշմարտասէր ինտելիգենցիան, իւր թարմ ուսանողութեամբ, բուռն զգուանք և խորին ատելութիւն արտայայտեց ռուս բռնակալ կառավարութեան՝ հրէական սրտաճմլիկ բարբարոսականկոտորածների համար։ Ռուս երիտասարդութիւնը ամենից լաւ ինք գիտենալով, որ Քիշինեվի կոտորածի իսկական հեղինակները ցարի մենդօրներն ու ոստիկաններն էին, այսօր գոռում գոչում է, որ ոբոլոր ռուսներիս ճակատին դրոշմուած է մի անպատկառ դրոշմ, որ դեռ շատ երկար պիտի մնայ պատմութեան խաւար էջերում և կը ջնջուի միայն ռուս բռնապետութեան տապալումով։

Հրէական կոտորածը յիշելիս, անկարելի է մի քանի խօսք էլ չասել այս բազմաչարչար ժողովրդի մասին։

Հէնց սկզբից իվեր ամէն ուրեք և ամենայն ժամանակ թշուառ հրէայի կարծես ճակատագիրն է եղել՝ տանջուել, հալածուել, անարգուել, չարչարուել և այլն։ Բայց հաւիւ մի որևէ պատմութեան մէջ հրէաների ժողովրդական և քաղաքացիական ամենատարրական իրաւունքներըյանքան սահմանափակ շրջանի մէջ գտնուին և, բառի ամենալայն նշանակութեամբ, ամէն կողմից ասենանկոսպ արհամարհանքների ենթարկուած լինեն՝ որքան Ռուսաստանում (չնայած, որ ռուսական և՛ գործարանական ամենամեծ աղդակ եղող և նախաձեռնողներ եղել են և են այժմ հալածուած հրէաները։ Այդ խոստովանում են և իրենք ռուսները)։ Նա հալածուած և արհամարհուած է ո՛չ թէ միայն փանատիկ ռուս ամբոխից, հոգևորականութիւնից և կառավարութիւնից, այլ և ամէն դասակարգերից, հատուածներից, մասուլից, ռուս մուժիկից և մի շարք գրիչներից... Խեղճ հրէայի առաջ Ռուսաստանում կանգուած են բարձնագոյն ու սրբենակարգ դպրոցների դռները, առևտրական ընդարձակ ասպարէզները, պետական զինուորական և քաղաքական ծառայութիւնները, զանազան պաշտօնական հաստատութիւնները և գեղարուեստի ու գիտութեան աշխարհը (հէնց այս տարի ռուսաց բոլոր քաղաքներից վռնտեցին հրէա արտիստներին։ Այնքան խնդիր աղաչանքներ, այնքան ուժեղ պրոտէկցիաներ անզօր գտնուեցին գոնէ մի ամիս ուշացնել այդ բարբարոյն օրէնքի գործադրութիւնը)։ Ուրիշ խօսքով, հրէաները Ռուսաստանում մի մի կենդանի մեռածներ են, ուրիշ ոչինչ։

Դէպի հրէաները տածած այս անզուսպ ատելութեան ամենախոշոր պատճառներից մէկն էլ էլի նոյն ոճրագործ մամուլն է եղել, որ ժամանակի ընթացքում թոյլ է տուել իրեն սիրամանել և թշնամացնել աղգերը միմեանց դէմ, որի համար և հասարակաց ու ամբոխի ամբարոյական կարծիքների և քնաղդների հիմն է դրուել։ Ահա թէ ինչու համար խեղճ հրէան այժմ ոչ մի տեղ էլ չի կարող ազատ համարձակ մուտք գործել, որովհեաև ամէն տեղ և ամէն մի միջավայրում նա իրանից հազար անգամ մեաւորապէս, ֆիզիգապէս ու նիւթապէս ստոր աստիճանի վերայ կանգնած ռուս կացարի կողմից ամենափոզոյային հայհոյանքների և կշտամբանքների է ենթարկվում, իսկ ներկայ եղող աղդեցիկ ռուսներ այդպիսիներին լռեցնելու փոխարէն ծիծաղելով մինչեւ անգամ պատասխանում են. «ժիտին—հրէային—ինչ որ անեն, տեղն է. նոյնն է նրանց թէ միշտ հայհոյես, անարգես»։ Ահա դէպի հրէաները ունեցած ռուս ամբոխի հասարակաց կարծիքների արտայայտութիւններից մէկը։ Եւ մինչև օրս էլ Ռուսաստանում միմեանց արհամարհելու և մի որևիցէ անհատի կամ ընտանիքի ծարայեղ ստորութեան և անպատուութեան չափը ոանիծուած ժիտա բառով են բնորոշում։ Թող զարմանալի չթուի, որ XX-դ. դարում եւրոպական մի ջերմեռանդ (որպէս թէ) քրիստոնեայ պետութեան այս հալածուած աղգին նիւթած անլուր կոտորածներից յետոյ, այժմ նորան Ռուսաստանում իրեն սահմանուած հարաւային Ռուսաստանի և Պոլտավայի մի քանի նահանգներից իզատ, ուրիշ և ոչ մի տեղ 3 օրից աւել ապրելու իրաւունք չի տրվում։ Հակառակ դէպքում թէ հրէային պահող բնակարանատէրը և թէ ինք հրէան ամենախիստ կերպով պատժվում և աքսորվում են։ Մինչև օրս էլ հրէաները սրտի անհուն յոյզերով և յորդ արտասուքներով են պատմում սարանից մի քանի տարի առաջ ռուս կառավարութեան ամենարարբարոս արարքը, որ բռնի ոյժով կողոպուտի, յափշտակման, հրոյ և սրի ճարակ դարձնելով իրենց ինչքը, բազմամիլիոն հարստութիւնը, բազմաթիւ պարծարանները, տուն տեղ, ալոթատներ, մի խօսքով, ամէն ինչ, և հիւսիսային Ռուսաստանի նահանգներից և մասնաւորապէս Մոսկուայից և Պետերբուրգից վայրենի ռուս զինուորների և ոստիկանութեան մտրակների, բռունցքների ու բթացած սրերի սոսկալի շառաչիւնների տակ, հիւսիսի սառուցիկ ցուրտ ու բուքի ատեն քշեց իւր մայր երկրի սահմաններից բոլոր ոանիծածա, «խարբեբայա» ժիտերին դէպի հեռաւոր Բեսարաբիան և լեհական մի քանի նահանգներ։ Սոսկալի՜ է եղել այդ հալածանքը։ Այդ ցրտերին որքա՜ն անմեղ երեխաներ, ծերեր և հիւանդներ ճանապարհներին ցուրտ ու բքից, սովից և ծարաւից մեռել, անյետացել են։ Ահա, թէ ինչեր է անում ինքն իրան քրիստոնէական եղբայրասիրական կրօնի ամենաջատագով և նախանձախնդիր համարող զգուելի պետութիւնը, որի մասին ասում է Մակսիմ Գորկին. «Իրենց ներկայացնում են իբրև հաւատացողներ Աստուծոյ, գթոյ և բարութեան Աստուծոյ. այդ մարդիկը հէնց այն օրերին, որ նուիրել էին իրանց Աստուծոյ տօնին, սպանում են երեխաներին ու ծերերին, բռնաբարում կիներին, թալանում ու տանջում այլ մարդկանց, որանք պատկանում են՝ նոյնպէս Աստուծոյ ժողովրդին՝ որը նրանց տուել է Քրիստոսը»։

Հաւատացնում եմ, որ կարմիր սուլթանի բաշի-բոզուկների և արիւնռուշտ աւազակ քրդերի արարքների հետ համեմատած այս բոլորը, Մեծ մարդասպանի և Համիդիէ քրդերի ճիւաղային արարքներն ու վայրենութիւնները շատ բարձր են կանգնում։ Ռուսաստանում նոյն սահմանեալ օրէնքներին ենթարկվում են և արտասահմանեան հրէաները։

Այժմս արդէն, ինչպէս ասում են, «դանակը ոսկորին է հասել»։ Հրէաները այլևս Ռուսաստանում ապրել միանգամայն անկարող են։ Նոքա սկսել են պանդխտութեան կործանիչ ցուպը ձեռքերին առած՝ անընդհատ կերպով դէպի հեռաւոր Ամերիկա, Տրանսվալ և արևմտեան Եւրոպա գաղթել։ Իսկ մի ուրիշ մասն էլ անիծած «հացի խնդրիցս» սարսուած՝ սկսել է երբեմն երբեմն առերես ռուսաղաւանութիւն ընդունիլը որից յետոյ իհարկէ իրաւունք է ստանում ուղղափառ ռուսների հետ հաւասար իրաւունքներ և արտօնութիւններ վայելել։

Աւելորդ չի լինի կարծեմ այստեղ հրէաների օրօրոցի երգերից մէկի նմուշը յառաջ բերել, որտեղ ամենասիրուն կերպով հանդէս է գալիս հրէան իւր սեպհական զգացման արտայայտութեամբ։

Օրօր կասեմ ու կերգեմ,
Իմ սիրասուն սիրուն զաւակ,
Դառն է կեանքդ, ուղիդ՝ փշոտ.
Հանդիստ քնիր անմեղ հրեշտակ։
Կանցնին օրերդ, կը մեծանաս,
Ուսում հանճար դու կըստանաս.
Փառքի պակ թէ ժառանգես.
Էլի տանջուած, անբաղդ «ժիտն»ես։
Ննջէ մանկիկ իմ կաթոգին,
Խայտա, երգէ՝ քանի փոքր ես.
Փաբթամութեան մէջ մեծանաս,
Էլի նոյն ծեծուած «ժիտն»ես։
Հարստութիւն ու խելք, համբաւ
Դառն քրտինքով թէ ձեռք բերես,
Նորից անարգ, անտէր «ժիտն» ես.
Խաղաղ ննջիր, անմեղ զաւակ։

Ցգրութիւն
Քեզ միշտ սիրող ընկեր՝

Մոսկուա Արաք

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

ԵՐԵՒԱՆ, 1904 թ. ապրիլ

Վերջին ժամանակներում նեստորական ասորիները, որոնք այնքան բուռն կերպով ընկան ռուս եկեղեցու գիրկը, իրենց վատթար և զազիր գործերով այնքա՞ն ստորացան, որ նոքանք պատճառում են։

Պատմական փաստերը ցոյց են տալիս, որ ինչ ազգ էլ, թէկուզ դաւանաբանական և կրօնական ամեն կողմերով անցել է մի ուրիշ ազգի կողմը, բայց այնուամենայնիւ, դարերի ընթացքում նա պահպանել է իր ազգային կեանքն ու առանձնայատկութիւնները։ Սակայն այսօր ռուսացած ասորին այդպէս չէ. նա ընդունելով ռուսաց ծէսը և եկեղեցին՝ կարճ ժամանակամիջոցում գլխովին ձուլուեց ռուսների հետ և ներկայանում է այժմ աւելի մի թիւռ ռուս, քան Սիբերիայի դարեւոր սլաւեանը։ Նոքա ամեն տեղ խօսում են ռուսերէն. կամաց կամաց ոչնչացնում են այն ամենը, ինչ որ ասորական է և ընդունում այն՝ ինչ որ սլաւեանական է։

Ռուսացած ասորին իր դաւանան և գձուձ վարմունքով դէպի հայերը՝ ցոյց տուեց որ երբէք արժանի չէ ինքը նոյնիսկ ազգակիցը կոչուելու՝ Ղազարեանի, Ջուլամերկում ապրող այն ասորիների, որանք Մար-Շիմոնի հովանու տակ, ապրում են որպէս պարծանք ընկած Ասորեստանի։

Ռուսացած ասորին այսօր ներկայանում է և որպէս մի մատնիչ, գործիք ռուս կառավարութեան այն քաղաքականութեան, որ ճնշում, տանջում է կովկասեան ազգերին, որ կամենում է այլասերել և կլանել այն մանր ազգերին, որոնք յամառ կերպով տանում են ինքնապաշպանութեան գործը և գաղափարը։ Ասորի քահանան, երևակայեցէք, հայ գիւղերն ընկած, զանազան ստոր խարեբայութիւններով կառավարութիւնից ճնշուած, ծիրուած և ապքաստացած գիւղացուն խոստումներ անելով խլում է հայ եկեղեցուց, սլաւեանական համայքներ է կազմում զանազան գիւղերում։

Քաղաքական հալածանքների գործում դէպի հայերը՝ ռուս պօլիցիային և ժանդարմերիային բաւական նեցուկ են այսօր բազմաթիւ ասորիներ, որոնք չնորհիւ իրենց այդ ստոր գործի, զանազան պաշտօններ են ստացել կառավարչական հիմնարկութիւնների մէջ։ Երևանի շրջանում ասումնարանական գործը այժմ գլխաւորապէս ասորի թերուսների ձեռքումն է, և հայ ուսուցիչները կասկածաւոր անհատներ նկատուելով, գրեթէ մեծ մասամբ արձակուեցին պաշտօններից և շատերը ապստամբուեցին։

Եւ սա՛ նրանք, որոնք մի ժամանակ հայ ժողովրդի անկեղծ եղբայրակցութիւնն ու յարգանքն էին վայելում, այսօր միմիայն իրեն գոյութեամբ առաջացնում են նողկանք և ատելութիւն՝ ո՛չ թէ հայերի կողմից, այլ նոյնիսկ և թիւրքերի։ Կովկասեան պարսիկ կամ իսլամ ժողովուրդը որքան էլ հայերից հեռու է կրօնական տեսակէտից և հակառակ հայերիս, սակայն մատնութիւն դէպի իր դրանից նոյն իսկ այլ ազգը, շատ քիչ և հազիւ թէ անում է։

Իսկ միւս կողմից քիչ չեն հայերից նրանք, որոնք յուզա.ի կնիքը ճակատներին, պաշտօն և արծաթ ստանալու համար, պատուհաս են հանդիսանում ժողովրդի գլխին...

Խաչատուր Նարիմեան

ՎՐԻՊԱԿ

Նախորդ թիւի բանասիրականի բ. սիւնակի 14դ տողի «հարստութիւն»ը կարդալ «հաստատութիւն»։

Отговорникъ: Степанъ Г. Степанянъ

Търг. печат. и лит. Меркуръ—Русе.